

երգեցիկները երգեցին Քառասուն մանկանց Մանկունքը. «Թագու որ երկնաւոր» :

Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց օրհնել և խրախուսել Միաբանութեան՝ ասելով

« Եւ երկուց Արքազանից սրտագին արտայայտութիւնքը ընդունումեմ՝ իբրեւ գրաւական զգացմանց անդամոց Միաբանութեան, և իբրեւ գրաւական իմ կողմից՝ խոստանումեմ միշտ և յամենայնի յարգել համեստութիւնը, պատուել և քաջալերել առաքինութիւնը, խրախուսել և սիրել համեստներին իբրեւ իմ զաւակ և որդի: Ազօթենք առ Աստուած, որ առաքինութիւնն, եռանդն ու համեստութիւնը թագաւորէ մեր Միաբանութեան մէջ, և այսպէս գօտեւորեալ՝ Աստուծոյ տան արժանաւոր մշակներ հանգիստնայ » :

Յաւարտ սեղանին, Նորին Վեհափառութիւն օրհնեց սեղանը, բարեմաղթութեամբք շնորհաւորեց Նոր-Տարի, յետ որոյ միաբանք կարգաւ համբարեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աջր և ցրուեցին ուրախ արամադրութեամբք:

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ ՎԱՆԻՅ.

Հայր Խմբագիր,

Հաճեցէք Ձեր ազգօգուտ թերթերէն միոյն մէջ հրատարակել հետեւեալն, ընդունելով մեր ջերմ շնորհակալութիւններն և յարգանքներն. Արարք Ս. Եկեղեցւոյ վերակառուցման Գործ, Ժողովոյ Գիւմնն:

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ի ՎԱՆ.

Արարք գիւղն՝ որ երբեմն Վանայ արուարձաններէն մին է եղել և Այգեստանի տակաւ ընդարձակմամբն խառնուած է քաղաքին, ուներ փոքրիկ եկեղեցի մ' 237 տարի առաջ շինուած՝ տձև ու նսեմ:

Ժողովուրդն՝ որ անտանելի նեղութիւններ կը կրէր ապաքէն իր եկեղեցւոյն անձկութեան պատճառաւ, վաղճեց հետէ կճգներ, կտքներ վերակառուցանել և ընդարձակել զայն, սակայն անհնար կլինէր նմա. Իր այս յուսարեկ վիճակին մէջ էր Ժողովուրդն, երբ անցեալ տարի, Ապրիլ 14-ին, Նոր Կիրակէի առաւօտ, յորում Արարք Ս. Եկեղեցւոյ տօն կը կատարուէր ըստ դարաւոր սովորութեան, քաղաքիս Առաջ. Տեղ. Գեր. Տ. Պօղոս Եպ. Մե-

լիքեան զաւուր Օրհնութիւնն—«Նորոգեալ կղզիք.» Բնաբան գնելով քարոզէր յատենի Եկեղեցւոյն՝ բարոյական նորոգման վրայ, անակնկալ յայտարարեց թէ՝ «Այսօր մեք ևս Արարք Եկեղեցին պիտի քակենք, Աստուծոյ յաջողութեամբ նորոգելու նպատակաւ.» Ժողովուրդն չհաւատալով՝ յունչ կառնոյր, քանզի այս մասին՝ ո՛չ նախապէս խորհուրդ մը տեղի ունեցել են և ո՛չ ծրագիր մը պատրաստել։ Սակայն երբ ժամերգութենէն զինի՝ Նորին Սրբազնութիւնն ինքնին զարկեց առաջին փայտատն, ժողովուրդն աներկբայ վստահեցաւ թէ իր Եկեղեցին արգարե պիտի շինուի, ուստի և երբ Գեր. Ս. Հայրն ժողովրդի այգիներն կերթար Ս. Եկեղեցւոյն համար ծառեր կըտրել տալու, ժողովուրդն՝ ոգւով չափ բերկրեալ՝ մէկի տեղ երկուս կնուիրէր, ո՛չ միայն Արարքցեն, այլ և Նորաշէնցին, Յայկոյսներցին ևլն. և մինչև իսկ մեր Թիւրք հայրենակիցք ծառեր նուիրեցին ի պատիւ Նորին Սրբազնութեան։ Ամբողջ ծառոց գումարն 1000 ի հասաւ, ոյց արժէքն էր 1500 Օսմ. ոսկի։ Եւ ահա յամենուստ հեղեղի նման հեղանիլ սկսան կանանց սիրած զարդերն արծաթ, ոսկին ընդ նոսին և փայտ, քար և ձրի աշխատութիւնք, Հիանալի էր արգարե մեր ժողովրդի անսահման եռանդն.— զի ոմանք ձրի բահ, բրնձ կղարնէին և ոմանք մատիտ ու գրիչ, այլք իրենց գրաստիւ քար, փայտ և աղիւս կրէին, իսկ գրաստ չունեցողքն՝ իրենց հուժկու բաղլօքն ու շալլօքն, աստ՝ աղիւսարկուքն աղիւսներ կլմափէին, անդ ոսկերիչք, դարբնք և պղնձագործք քարեր կտաշէին ամենայն յաջողութեամբ, սոքա քարհանքներ կպիղէին, նոքա՝ նաւերով՝ քարերն ի նաւահանգիստն կփոխադրէին. մի քանի խումբ երիտասարդք քարհանքեն և նաւահանգստէն՝ երկերկու ժամու հեռի յԱրարքայ՝ սայլերով ահագին քարեր կը քաշէին և քանիք՝ սքանչելի անձնաւիրութեամբ՝ սայլերու սունեաց վրայ քանի մի հարիւր լիտր թաց և ահագին ծառեր բարձած կը ձգէին՝ այնքան եռանդով ու խանդով մինչ շատ մը Թիւրքեր ու Գիւրգիւր անգամ հաճոյք զգալով կը ծակցէին անոնց, փողն ու թմբուկն ևս անդադար կհնչէին, փափկասուն տիկնայք աղիւսի կառքի պնակաց լծուած՝ անձնիւր զոյգն՝ օրական 1000 կաղպար աղիւսոց աւել կրէին, այն է՝ 6000 ռիս. և գիրգ կուսանք՝ գոգնոցով կամ գրկով օրն ի բուն քար, կիր, աւաղ, հող կամ աղիւս կը կրէին, արիւն քրտինք թափելով, ո՛չ միայն արք և կանայք և կուսանք, այլ և դողդողուն ծերուկք ու պառաւուկք, այլ և մանկունք ու քնքոյշ աղջկունք իսկ, և այն՝ աշնակիսի ողևորութեամբ՝ զոր ո՛չ գրիչ կարէ նկարել և ո՛չ լեզու ճառել. . . .

Այսպէս ահա շնորհիւ մի հայ Զօրարարէլի գործունէութեան և տեղ. իշխանութեան հետ ունեցած ջերմ յարաբերութեանն՝ Արարքայ ժողովուրդն բաղդ ունեցաւ անցեալ տարի քակել, ընդլայնել և կառուցանել իր Ս. Եկեղեցին իւր 5,000 ոսկի ծախսով, ոյր 1000ն՝ զրամով ու զարդով, 1500ն՝ փայտով ու քարով իսկ 2500ն՝ ձրի աշխատութեամբ ելից Վանայ ժողովուրդն։ Արարք Եկեղեցին՝ որ նախ ունէր 18 կանգուն լայն, 28 երկայն, և 8 բարձրութիւն, այժմ ունի 23 լայն, 45 երկայն, և 12 բարձրութիւն և երկու շքեղ աւանդատուններ՝ յաջմէ և յահեկէ, Թող զայս՝ հարաւային որմէն

6 $\frac{1}{2}$ կանգնաւ հեռի՝ պարիսպ մ' ևս ունեցաւ, որով հին դիրքէն ամբողջ 12 $\frac{1}{2}$ կանգուն ընդարձակեցաւ։ Սոցա վրայ յաւել նաև 7 գործարաններ, շինուած Խաչաբակի հիւսիսային կողմն գէպի հրապարակն, որք արդէն տա-
րեկան 1500 դահեկան վարձ կրերեն։

Այս տարի ևս՝ Ս. Եկեղեցւոյ արեւմտ. կողմն գտնուած 150 քառակուսի կանգնաչափ գետինն պարսպեալ սեփականեցաւ, հիւսիս. արեւմտ. կողմէն՝ հացի փուռ մի երեք կրպակք և վարժարանի կրկնայարկ մի դասատուն քա-
կուելով՝ վերածուեցաւ պողոտայի, սակայն երկուստեք 16 կրպակք և 3 գոր-
ծարանք կառուցուեցան, որք այժմէն իսկ՝ տարեկան 2 200 դահեկան վարձ
կրերեն։

Հին Եկեղեցւոյ տաճարի խաչկալն երկու կանգնաչափ ընդարձակուելով ու
նորոգուելով՝ զետեղեցաւ յԱւագ խորանին, որ տաճարին երրորդ մասն է, զի
Տաճարն բարձաւ ի միջոյ, Աջակողմեան խորանին՝ որ նրբաշէն հնութիւն
մ' է՝ վերէն ճաճանչներ և վարէն պատուանդան դրուելով պիտի զետեղի
քիչ օրէն։ Իսկ ձախակողմեանն՝ աջակողմեանին յար և նմանն պիտի շի-
նուի ի նորոյ, ոյց—երկոցուն նորոգութիւնն ու շինութիւնն սակարկուած է
5,000 դահ, Ս. Եկեղեցւոյն Ատենի վերեւ շինուած է փայտաշէն գեղեցիկ
գմբէթ մը, ոյր տրամագիծն է 8 և բարձրութիւնն 18 կանգուն, դադաթն
երկաթապատ և կապտագոյն ներկուած՝ ունի երկկարգ 16 պատուհաններ
ապակեզարդ, Որմոյ $\frac{1}{4}$ մասն քարուկիրով շարուած են և $\frac{1}{4}$ ն աղիւսով, իսկ
խորանք և Աւանդատունք՝ ամբողջապէս քարակիրով, Երեք խորանաց ճակա-
տաց վերեւէն՝ երեք լուսանցքներ թաղուած են, բոլորակ ու ճաճանչաւոր։

Հիւսիս. և հարաւային որմոց վրայ՝ գէպ արեւմ. կողմերն՝ բացուած են 2
հոյակապ դուռնք. և յատակէն 2 կանգ. բարձր՝ երկուստեք՝ 1 $\frac{1}{4}$ շքեղ պա-
տուհանք կամարաձև, սպիտակ քարամբք, երկաթի վանդակօք և ապակեայ
շրջանակօք, իսկ վերի կողմերն՝ 6 մեծ ու փոքր լուսամուտք ապակեզարդ՝
2ն աջ ու ձախ դասուց, իսկ 4ն կանանց յատկացեալ երկյարկ բազմոցաց
(թառմա) վրայ, Արեւմ. որմին վրայ՝ վարէն՝ 2 կամարաձև պատուհանք,
նման միւսոյն և վերէն՝ 5 լուսամուտք ու պատուհանք՝ դարձեալ կանանց
բազմոցաց վրայ, Որմին մէջ տեղն՝ մի հոյակապ գուռն, ոյր ձախտին վրայ
զետեղուած է մի մարմարեայ յիշատակարան, հետեւեալ վերտառութեամբ.
« Ի փառս միոյն Աստուծոյ վերականգուցաւ Արարուց Ս. Եկեղեցիս և շրջա-
պատ պարսպաւ ընդարձակեցաւ անխոնջ ջանիւք Լիմ անապատի վանահայր
և Առաջ. Տեղ. Վանայ Տ. Պօղոս Եպիսկոպոսի Մեկիքեանց և արգեամբք
ժողովրդեան. 1884 » :

Հատաղցի ազգայնոց նուիրած ծառոց կոճղերու տախտակներն կրաւէին
արդեօք Ս. Եկեղեցւոյն ձեղունն ու յատակն տախտակամածելու, և Գեր.
Ս. Հայրն արդէն կամէր ամբողջ շինութիւններն աւարտել տալէ յետոյ՝ յա-
ռաջակայ դարնան՝ դարձեալ նոր Կիւրակէի օրն օծել զՍ. Եկեղեցին, բայց
նկատելով որ ժողովուրդն կփութայ իր շինած Ս. Եկեղեցւոյն օծումն օր
առաջ տեսնել, հաճեցաւ զիջանել ժողովրդի այս բուռն բաղձանաց՝ և ամ-

սոյս 10 և 17րդ օրերն օծեց զՍ. Եկեղեցին, շքեղ հանգիսիւք:

Արդէն ամսոյս սկիզբէն ի վեր՝ նահանգիս և քաղաքիս այլ և այլ կողմերն, այլ և այլ դասակարգի անձանց հրաւիրատուներ զրկուած էին ժողովոյն և իր նախագահ Ս. Հօր կողմանէ: Ուստի և ամսոյս 9րդ շաբաթ օրն՝ բոլոր գաւառներէն ու թաղերէն 8000 ի չափ երկսեռ բազմութիւն մը հաւաքուած էր Արարք, եկեղեցական հսկումն գիշերուան ժամ 5ին սկսելով՝ ժամերգութեան հետ աւարտեցաւ առաւօտեան ժամ 2ին, յորում պահու Աղթամարայ Կաթողիկոս Ամեն. Խաչատուր, Գեր. Տ. Պօղոս, Հիղանցի Յակոբ և Կոուց անապատի վանահայր Յովսէփ Ս. Եպիսկոպոսունք, հինգ Արժ. Աւարդապետք, քաղաքիս երկոտասան Ս. Եկեղեցեաց աւագերէցք և այլ Արժ. երիցունք զգետաւորեալ՝ գպրաց երգեցողութեամբ՝ Թաղ, Խորհրդարանէն իջան ի Ս. Եկեղեցին, որ պարունակած 5,000 ի չափ երկսեռ բազմութեամբն մարդածովի տեսարան մը կենրկայէր, Թափօրն՝ Ս. Եկեղեցւոյն արեւմ. դռնէն ներս մտնելուն պէս՝ բաժնեցաւ յերկուս, ոյց մին յաջմէ և միւսն յահեկէ երթալով՝ ելին ի սեղանն, ուր նախ Ամեն. Տ. Խաչ. Ս. Կաթ. և ապա՝ Նորին Սրբազն. Պօղոս Եպս. քարոզներ թօսելէ զկնի՝ սկսան հեղուլ զՍ. Միւռօնն Աւագ խորանի սեղանի վրայ և օծել զայն և զսինն. ապա աջ ու ձախ խորանաց սեղաններն ու սիւներն, երից խորանաց ճակատներն, աւաղանն և որմերն, Աւագ և աջակողման խորանքն՝ ըստ հնոյն՝ օծան յանուն Ս. Աստուածածնի և Ս. Յովհաննու Կարապետին, իսկ ձախակողմանն՝ որ ի հնումն օծուած էր յանուն Ս. Գէորգայ զօրավարին, ի նորումն՝ ժողովրդի բուռն թախանձմամբ՝ օծաւ յանուն Ս. Աւարդանայ զօրավարին մերոյ, Այսպէս՝ 2 ժամաչափ ընթերցմունք և արարողութիւնք յարատեւելէ զկնի՝ նկատելով որ այլ ևս անհնար է ժողովրդի անհուն բազմութենէն շարժել կամ շարունակել, Նորին Սրբազնութիւնք հարկադրեցան ընդհատել զարարողութիւնսն և թողուլ յառաջակայ կիւրակէին Ս. աւաղանի օծմունք: Օծման ժամանակ ներկայ էր տեղւոյս Անգլ. Հիւպատոս պ. Լամ և թիւրք երեւելիներէն քանինք, Գաղարէն յետոյ՝ երբ Գեր. Պօղոս Ս. զգետաւորութիւնը գնաց: Արժ. Յովսէփ վարդ. Սօլոսեան և Մելքիսեդէկ վարդ. ազդու քարոզներ թօսեցան, առաջինն՝ հայերէն իսկ երկրորդն՝ ներկայ գտնուող թիւրք սպայից և ոստիկանաց պատճառաւ՝ թիւրք լեզուաւ: Ապա ժամ 4¹/₂ րէն՝ անդրիկ Ս. սեղանոյն վրայ անդրանիկ Ս. պատարագն սկսաւ մատուցանելն, Սրբազնութիւնն, Գեր. Տ. Պօղոս Ս. Եպս.

Յետ ընթերցման ճաշու Ս. Գրոց՝ Ս. Եկեղեցւոյս Աւագերէցն Արժ. Տ. Գիոնէսիոս Հայրն ի գիմաց ժողովրդեան ուղերձ մը ընթերցաւ, ուղղեալ առ Ն. Բարձր Սրբազնութիւնն, Պատ. Թաղ, Խորհուրդն և առ համայն ժողովուրդն, Յետ որոյ Ն. Գերապատութիւն ևս յուղեալ սրտիւ՝ օրհնեց զհամայն նուիրատուս և զաշխատաւորսն, որք աստ և անդր ի Կ. Պօլիս. և յորդորեց զժողովուրդն՝ յարաժամ առատաձեռն մնալ, Ապա ջերմագինս բարեմաղթեց յաղագս անգին կենաց Օգոստ. Կայսեր մերոյ, քաղաքիս Ասեմ. Կուսակալին և իւր բոլոր պարագայիցն, Հնորհակալութեամբ և

շեշտելով յայտարարեց թէ՝ « Այս բոլոր բարիք զուտ արդիւնք են մեր Վեհ. Կայսեր Հայրական գթութեանցն, զոր ունի առ Ազգն մեր և Եկեղեցի » : Ապա Ս. պատարագն յարատեցաւ հանդիսաւոր կերպիւ և աւարտեցաւ ժամն 7/1 ին. Դպիրքն սկսան երգել « Այսօր ընդ հրակերպեան » շարականն և յառաջ դիմել դէպ ի Վարժարանն. ուստի և, Նորին Սրբազնութիւնն՝ շրջափակեալ եկեղեցական ուխտէն և ժողովրդի խումն բազմութեամբ՝ այնպէս զգեստաւորեալ ել ի Վարժարանի ծաղկոցն, ուր հարկաւոր պատրաստութիւնքն արդէն տեսնուած էին և 150 ի չափ պատուաւոր ազգայինք կսպասէին Ն. Սրբազնութեանն :

Անդ ներկայացաւ Վսեմ. Ալայ - Բէյին, որ մի գումարտակ հեծեալ և հետեակ ոստիկանօք դիշերն ի լոյս հսկել էր հանդիսատես ժողովրդին *), Այն ինչ թէյեր կրքաշխուէին ամենուն և երգեր ու նուազներ կերգուէին փոփոխակի, ի դիմաց ժողովրդին ատենախօսեց Տ. Օ. վարժապետ Բարադամանն, որ բանախօսութեան բովանդակութիւնն Ձեր Հայրութեան կրկնեք ներփակեալ հրատարակելու խնդրանք **), Այնուհետեւ Արքարեան Գր. Էֆ. թիւրքերէն լեզուաւ բարեմաղթեց յաղագս երկրութեան կենաց մեր Վեհ. Սուլթանին (բուն ծափահարութիւնք և կեցցեք), Ն. Կայսեր. Վեհափառութեան անձնուէր Նախարարաց և քաղաքիս Վսեմ. Կուսակալ Համիտ փաշայի և իւր պարագայիցն և մասնաւորապէս Վսեմ. Ալայ - Բէյին (ծափահարութիւնք), Յետ որոյ՝ Արժ. Տ. Դիոնէսիոս հայրն՝ ի դիմաց ժողովոյս՝ նուիրեց Նորին անձնուէր Սրբազնութեանն Տ. Պօղոս Եպիսկոպոսին վասն անձնուէր ջանից՝ մի ոսկի ժամացոյց և մի արծ. տուփ՝ որ վրայ քանդակուած էր Արարք Ս. Եկեղեցւոյն տիպարն և հետեւեալ տողերն. « Նուէր ժողովրդական առ Գեր. Տ. Պօղոս Եպիսկոպոս Մելիքեան ի յիշատակ անդուլ ջանից իւրոց, որովք վերաշինեցաւ Արարք Ս. եկեղեցին » : Ապա Նորին Սրբազնութիւնն ևս ի դիմաց ժողովոյս՝ մի արծաթի ժամացոյց Պ. Միքայէլ ճանեանի, որ իւր Հայ Բնակիչէլ, ճարտարապետական բոլոր գործոց մէջ զարմանալի հանճար ու տաղանդ փայլեցնելով՝ մեծ դիւրութիւն պատճառեց այս մեծ գործոյն և շահ Ս. Եկեղեցւոյն, Վերջապէս Ս. Հայրն օրհնելով արձակեց զգիշուած ժողովուրդն, որ մինչև ժամ 8 1/2 -ն անսուղ կանգնած էր : Մնացեալ օժմունք կատարեցան յաջորդ կիւրակէ Նոյեմ. 17 ին և Նոյն երկուց աւուրց մէջ՝ 130 օսմ. ոսկիներ նուիրեցան Ս. Եկեղեցւոյն, Խորի՛ն և անհուն շնորհակալութիւն արդեամբ հայրենասէր Սրբա-

(*) Նոյնպէս եւ հաջար շնորհակալութիւն նսեմ տեղւոյս զօրաց Գումանդատ Վսեմ. Մելիքի փաշային, որ խոնարհելով Նորին Սրբազնութիւն Գեր. Տ. Պօղոս Եպիսկոպոսի թախանձանաց՝ ի պատիւ Հայ ազգութեան վաթսուսի չափ մի դուստրտակ զօրք խրկեց յեկեղեցին եւ նորա շուրջ եղող ժողովրդեան բազմութեան հսկելու : Բօք-

(**) Տեղի անձկութեան պատճառով ինչպէս Պ. Բարադամանի նոյնպէս եւ Պ. Պօղոս Նաթանեանի ճառը չլսելի կարողանանք տպել. Ծան. Խմբ.

զան Պօղոս Եպիսկոպոսին, որ այսպէս վարժեց զմեր ժողովուրդն յառատաձեռնութիւն և ի գործ, Հազար շնորհակալութիւն և ժողովրդական լրութեան, որ այսքան զոհողութիւններ յանձն էառ, Առ այժմ այսչափ, մինչև ցաւարտումն մեր ամբողջ հաշւոյ, զոր հրատարակելու եմք ի հարկէ մանրամասնաբար, Ընդունեցէք . . . Խմբագիր մեր երախտագիտական յարգանաց հաւաստին:

Արարք Ս. Եկեղեցւոյ շինութեան Դործ. ժողով.

(ԿՆԷ)

24 Նոյ. 1883 Վան:

ԱՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԲ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Աստուածային յարկիս վերաշինութեան գործադիր ժողովք, պարտ անձին կըհամարի հրապարակաւ յատենի Ս. Եկեղեցւոյս իւր սրտի զեղուն շնորհակալութիւն մատուցանել առ Մելիքեան Դեր. Տէր Պօղոս Սրբազան Եպիսկոպոսն, վասն այն մեծ և ծանր գործոյն, որ հարիւր տարիէն ի վեր ըղձակերտ կըլինէր համայն լրութիւնս ժողովրդեան տեսնելու և չէր յաջողեր:

Այն՝ որոյ վասն շատեր ի Տէր ննջելով իրենց կարօտակէզ աչերն փակեցին և չտեսան Աստուածային յարկիս այս վսեմութիւն և նորոգութիւնը:

Նախապէս յաւերժ կեցցէ՛ մեր Օգոստոսիառ Սուլթան Համիտ Վայսրն, որոյ օրով ազգերնիս առաւելապէս կրօնական աղատութիւն կըվայելէ:

Վերնախնամ Տեսչութիւն պահած էր այս Ս. Տան շինութեան գործը Դեր. Սրբազանիս, որ Սողոմոնեան տաճարի նորոգիչ Զօրաբարելի հոգով օծեալ, ժողովրդեան ձայնին ունկն մատոյց, ձեռք զարկաւ Աստուածային Տանս վերաշինութեան, և այն որ քանի տարի յառաջ միայն հինգ կանգուն ընդարձակելու համար հարիւրաւոր ոսկիներ տալու յօժարութիւն կար, շնորհիւ Սրբազանիս հինգ կանգունի տեղ՝ տասնուհինգ ի լայնութիւն և 115 կանգուն յերկայնութիւն ընդարձակեցաւ ի հարաւ:

Մօտ հազար մեծ ծառեր կտրել տուաւ յԱյգեւստանու, անձամբ շրջակայելով՝ մօտ քսան հազար մարգակ և ծառ բերել տուաւ իւր ազգեցիկ ստորագրութեամբ ի Գաւաշու և ի Վարձկանից:

Ընդհանուր հանգանակութիւն գրելու համար թաղ առ թաղ և համարեա թէ տուն առ տուն շրջագայեց, նաւաւարներ իրենց նաւերով՝ բեռնակիր անասուն ունեցողք՝ թէ քաղաքացի և թէ գիւղացի մինչև անգամ և քիւրդեր իրենց անասուններով հարկեցոյց և ստիպեց որ օգնութեան հասնեն Արարք Եկեղեցւոյ շինման, Արհեստաւորք, ճարտարապետք, հիւսն, որմնագիր, երկաթագործ, քարահատ, սարակ և այլք՝ Նորին Սրբաշնութեան յորդորիչ ձայնէն ստիպուելով փութացին իրենց բաժին ընկած ծառայութիւնը մատուցանել Աստուծոյ տանս: